**ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Միգրացիայի և քաղաքացիության ոլորտի**

**քաղաքականության իրականացման**

**վարչության պետ Ի. Մկրտչյանին**

03.06.2025թ.

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետի կողմից

կատարված աշխատանքների վերաբերյալ

(10.02.2025-01.06.2025թթ.)

Հարգելի՛ տիկին Մկրտչյան,

2025 թվականի փետրվարի 10-ից 2025 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՈՔԻ վարչության Ծրագրերի իրականացման և վիճակագրության բաժնում իմ կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները՝

1. Խմբագրել եմ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված որոշակի վիճակագրական տվյալներ ՀՀ քաղաքացիության, ԼՂ բռնի տեղահանված անձանց, անձը հաստատող փաստաթղթերի, սահմանահատումների ինչպես նաև օտարերկրացիների վերաբերյալ:
2. Համադրել և վերլուծել եմ տարբեր գերատեսչություններից ստացված, ինչպես նաև անձնական հետազոտությունների հիման վրա ձեռք բերված վիճակագրական տվյալները՝ ապահովելով տվյալների ամբողջականությունը, ճշգրտությունը և հաշվետու փաստաթղթերում դրանց համահունչ ներկայացումը:
3. Պատրաստել եմ վիճակագրական աղյուսակներ՝ ապահովելով դրանց համապատասխանությունը միջազգային և իրավական տերմինաբանությանը, ինչպես նաև իրականացրել եմ վիճակագրական ցուցանիշների խմբավորում և համադրություն ըստ թեմատիկ ուղղությունների:
4. Հետազոտել և ներկայացրել եմ միջազգային վիճակագրական աղբյուրներից ստացված տվյալներ՝ ՀՀ համատեքստում համադրությունների և համաշխարհային միտումների վերլուծության նպատակով:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ՝ ------------------------------ Անի Հակոբյան

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ «գերազանց»:

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՄՔՈՔԻՎ պետ՝------------------------ Ի. Մկրտչյան